

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Յուրաքանչյուր մասնագիտության բնագավառում անհրաժեշտ է նորարարություն մտցնել առարկաների ու երևույթների ուսումնասիրության և վերլուծության համար: Նորարարություն- ները իրենց իրենց չեն ստեղծվում, դրանք հանդիսանում են առանձին մասնագետների և մանկավարժական կոլեկտիվների մասնագիտական որոնումների ու մանկավարժական փորձի արդյունք: Այդ պրոցեսը ոչ թե տարերային բնույթ է կրում, այլ կազմակերպված:

Մանկավարժական պրոցեսի նորարարության ռազմավարության մեջ առանձնակի կարևորվում է դպրոցի տնօրենի, ուսուցիչների և դասվարների դերը: Ուսումնական տեխնոլոգիաների բազմազանության պայմաններում, որոնցից են դիդակտիկականը, համակարգչայինը, պրոբլեմայինը, մոդուլայինը և այլն, ուսուցչի ֆունկցիան է որոշիչ դեր կատարում: Որքան ժամանակակից տեխնոլոգիաները ներթափանցում են ուսումնադաստիարակչական գործընթացի մեջ, այնքան ուսուցիչը ստանձնում է խորիքդատուի, ուղղորդողի և դաստիարակողի դեր: Դրա համար նրանցից պահանջվում է հատուկ հոգեբանամանկավարժական պատրաստվածություն, քանի որ ուսուցչի մասնագիտական գործունեության մեջ իրականացվում են ոչ միայն մասնագիտական առարկաների իմացություն, այլ նաև մանկավարժության ու հոգեբանության, տեխնիկայի ուսուցման և դաստիարակության ժամանակակից գիտելիքներ: Հենց այդ բազայի վրա է ձևավորվում մանկավարժական նորարարություններ ընդունելու պատրաստակամությունը:

Նորարարություն ասելով հասկանում ենք գիտական նորույթ, նորամուծություն և փոփո- խություն տվյալ գիտության մեջ: Մանկավարժական գործընթացի մեջ նորարարություն նշանակում է նորույթ մտցնել ուսուցչի և աշակերտների համատեղ գործունեության կազմակերպման, ուսումնադաստիարակչական աշխատանքների նպատակի, բովանդակության, ձևերի և մեթոդների մեջ:

Կրթական նորարարությունների հասկացության հիմքում ընկած են հետևյալ խնդիրները. 1. Մանկավարժական առաջավոր փորձի տարածում և յուրացում: 2. Մանկավարժահոգեբանական գիտական ձեռքբերումների պրակտիկայում կիրառում:

Նորարարական գործընթացի բովանդակության և կառուցվածքի հիմքում ընկած են երկու փոխկապակցված պրոցեսներ. նախկին ուսումնասիրությունների հաշվի առնում տվյալ բնագավառում և նորամուծություններ, որոնք փորձարկվել և իրենց արդարացրել են պրակտիկայում: Ուսուցիչը կարող է հանդես գալ որպես հեղինակ, հետազոտող, վերլուծող, ինչպես նաև

մանկա- վարժական նոր ըմբռնումների ու տեխնոլոգիաների փորձարկող և պրոպագանդող: Այս պրոցես- սով առաջնորդվելիս ուսուցիչը պետք է նախատեսվային ընտրություն կատարի, կոլեգաների և իր կողմից առաջ քաշված նոր մտքերն ու մեթոդները կիրառի ամենօրյա մանկավարժական աշխատանքի մեջ:

Հասարակության, մշակույթի և կրթության զարգացումը պարտադրում են, որ մանկավարժական գործընթացում ևս մի շարք նպատակասլաց նորամուծություններ արվեն:

1. Ժամանակակից սոցիալ-տնտեսական զարգացումը անհրաժեշտություն է առաջացնում, որ արմատական բարեփոխումներ կատարվեն կրթական համակարգում՝ տարբեր կրթօջախների ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպելիս:

2. Ուսուցման բովանդակության մեջ մարդասիրական վերաբերմունքի հաշվի առնումը, նոր ուսումնական առարկաների ներմուծումը և ուսուցման արդյունավետության բարձրացումը պահանջում են ուսուցման կազմակերպման ձևերի և տեխնոլոգիաների գծով որոնողական աշխատանքներ կատարել: Այս իրավիճակում զգալիորեն բարձրանում է մանկավարժական գիտելիքների դերն ու նշանակությունը:

3. Ուսուցիչը փոխում է իր վերաբերմունքը նախկին մեթոդներով աշխատելու մասին և սկսում է նորությները մտցնել ուսումնադաստիարակչական պրոցեսների մեջ: Նախկին կրթական համակարգի խստագույն սկզբունքների պահպանման պայմաններում ուսուցիչը ստիպված էր սահմանափակվել իր գործունեության մեջ: Նա ոչ միայն չէր կարող նոր ծրագրեր առաջարկել, այլև մանկավարժական նոր մեթոդներ և ձևեր կիրառել: Եթե նախկինում նորարարության կիրառումը թույլատրվում էր միայն պետական մարմինների և վարչությունների կողմից, ապա այսօր այն առավել ընտրողական և ստեղծագործական բնույթ է կրում: Դրա համար դպրոցի տնօրենները ուսուցիչների նոր գաղափարների մշակման և կիրառման համար լայն հնարավորություններ պետք է ստեղծեն:

4. Ուսումնական հաստատությունների շուկայական հարաբերությունների մեջ մտնելը, նոր տիպի կրթօջախների բացումը (այդ թվում նաև մասնավոր) միմյանց միջև ռեալ մրցակցության իրավիճակ են ստեղծում:

Ժամանակակից դպրոցում կուտակվել է հարուստ մանկավարժական փորձ, որը պետք է իրականացվի կոնկրետ մանկավարժական գործունեության մեջ: Սակայն դրանք հիմնականում չեն կիրառվում, քանի որ որոշ ուսուցիչների և ղեկավարների մոտ բացակայում են դրանց ուսումնասիրության և նոր ձևով մեկնաբանության հմտությունները: Շատ ուսուցիչներ չեն վերլուծում իրենց և կոլեգաների մանկավարժական փորձը:

Մանկավարժական փորձը կարող է լինել մասսայական և առաջավոր: Առաջավոր մանկավարժական փորձը պատմականորեն սահմանափակ է, քանի որ դպրոցի մեթոդական, նյութական, կադրային և այլ հնարավորությունների փոփոխման դեպքում մանկավարժական գործու- նեության նոր պահանջներ են առաջադրվում:

Մանկավարժական առաջավոր փորձի ստեղծման և փոխանակման գործում մեծ դեր է կատարում ուսուցչի դիրքը և կողմնորոշումը, դրա համար կոնկրետ փորձի վերլուծության և տարածման ժամանակ նա պետք է հաշվի առնի սուբյեկտի ազդեցությունը, ենթադրի մանկավարժական կոլեկիվներում դրա ցուցադրումը և հնարավոր կարծիքներն ու զնահատականները:

Ուսուցչի մանկավարժագետներ Ի.Պ. Վոլկովի, Տ.Ի. Գոնչարովայի, Ե.Ն. Իլյինայի, Ե.Ա. Յամբուր- գի, Ռ.Գ. Խազանկինի և այլոց մանկավարժական փորձի նորարարություններն ու հետազոտությունները արդեն դարձել են բոլոր ուսուցիչների ձեռքբերումը:

Ուսուցիչների գործունեության նորարարական ուղղվածությունը իր մեջ ընդգրկում է հոգեբանամանկավարժական հետազոտությունների արդյունք- ները: Դպրոցում աշխատողների համար մանկավարժության և հոգեբանության բնագավառներում կատարված ուսումնասիրությունները հաճախ անհայտ են մնում ինֆորմացիայի հաղորդման պակասի պատճառով: Վ.Վ. Կրասկու, Պ.Ի. Կարտաշովի, Մ.Ն. Սկատկինայի աշխատություններում ցույց է տրված, որ մանկավարժական հետազոտությունների արդյունքների ներմուծումը ենթադ- րում է պրակտիկ աշխատողներին ծանոթացնել գիտական հետազոտություն- ների հիման վրա ստացված փաստերի և նպատակալաց ձևով պրակտիկայում դրանց կիրառման հետ: Դա միայն հնարավոր է իրականացնել մասնագետների կողմից տրված մեթոդական խորհուրդների և կազմակերպված ուսումնական գործունեության պայմաններ ստեղծելուց հետո:

Այժմ հարց է առաջանում, թե ո՞վ պետք է հանդես գա նոր մանկա- վարժական գաղափարներ ու տեխնոլոգիաներ տարածողի և պրոպագանդողի դերում: Առանձին ուսուցիչների և դպրոցների փորձը, ինչպես նաև գիտական հետազոտությունների արդյունքները պետք է ուսումնասիրեն և տարածեն նախապատրաստված մանկավարժների խմբերը՝ ուսումնական գծով դպրոցի փոխտնօրենի ղեկավարությամբ: Նման խմբերի ստեղծման անհրաժեշ- տությունը պայմանավորված պետք է լինի մի շարք հանգամանքներով:

Մանկավարժական նորույթի, կառուցողական գաղափարի և տեխնոլոգիայի հեղինակները ոչ միշտ են իրենց հաշիվ տալիս առաջարկի արժեքավորության և պրակտիկայում նրա կիրառման անհրաժեշտության մասին:

- Դեղինակը հաճախ չի ձգտում իր գաղափարները տարածել, քանի որ դա բավականին ջանքեր և ժամանակ է պահանջում:

- Նորույթի շարադրումը հեղինակի կողմից միշտ չէ, որ գիտամեթոդական առումով հաջող է ստացվում:

- Մանկավարժների խումբը կարող է իր վրա վերցնել ոչ միայն նորույթի ներդրման, այլ նաև այն անալիզի ենթարկելու և առանձին ուսուցիչներին, ինչպես նաև մանկավարժական կոլեկտիվին դրա մեջ ներգրավելու ֆունկցիաները:

- Մանկավարժական խումբը սիստեմատիկ հավաքում է նաև ամբողջ աշխարհի արժեքավոր մանկավարժական գաղափարները, տեխնոլոգիաները, կոնցեպցիաները կամ ըմբռնումները մամուլից և բուհերի աշխատանքային փորձից:

Նորույթի ներդրման ժամանակ հեղինակի ներկայությունը նպաստում է նրա անհատական - ստեղծագործական հնարների կիրառմանը և խթանում դրանց արդյունավետ իրականացմանը: Այս դեպքում հեղինակի և ներդրողների ուժերը միավորվում են: Նորարարության որակը արժեքավորվում է պրակտիկայում, երբ ստացվում են փորձարարության արդյունքները:

Կիրառվում են հատուկ չափանիշներ, որոնք հնարավորություն են տալիս դատել նորարարության արդյունավետության մասին: Առանձնացվում են մանկավարժական նորարարության հետևյալ չափանիշները. բարձր արդյունավետության բարձրացում, նորույթ, օպտիմալություն, նորարարության ստեղծագործաբար կիրառումը պրակտիկայում:

1. Նորարարության հիմնական չափանիշը համարվում է նորույթը, որը կապված է գիտամանկավարժական գնահատականի և առաջավոր մանկավարժական փորձի հետ: Դրա համար նորարարության գործընթացը կիրառելուց առաջ ուսուցիչը պետք է բացահայտի, թե իրականում որն է առաջարկվող նորույթի էությունը: Մեկի համար այն կարող է նորույթ լինել, իսկ մյուսի համար՝ ոչ: Ուրեմն, նորարարության պրոցեսի մեջ ուսուցիչներին պետք է ընդգրկել կամավորության սկզբունքով, հաշվի առնել նրանց անհատական-հոգեբանական առանձնահատկությունները: Առանձնացվում են հետևյալ նորույթի մակարդակները. բացարձակ, լոկալ -բացարձակ, պայմանական, սուբյեկտիվ և կիրառությանը տարբերվող (Մ.Ա. Բուրգին):

2. Մանկավարժական նորարարության մեջ օպտիմալություն ապահովելու համար ուսուցիչն ու աշակերտները մեծ ջանքեր պետք է թափեն և հասնեն սպասված արդյունք- ների: Տարբեր ուսուցիչներ միևնույն արդյունքի կարող են հասնել տարբեր ջանքերով և տարբեր ժամանակում: Կրթական համակարգ ներմուծված մանկավարժական նորարարության բարձր արդյունքների

ապահովումը, որքան քիչ ժամանակ և ջանքեր է խլում, այնքան բարձրանում է նրա օպտիմալությունը:

3. Արդյունավետությունը որպես նորարարության չափանիշ ընդգրկում է մանկավարժի կատարած գործունեության դրական արդյունքների չափը: Արդյունքների նշանակությունը գնահատելու փաստը այս չափանիշի անհրաժեշտությունն է ընդգծում:
4. Մեր կողմից նորարարության ստեղծագործաբար կիրառումը դիտվում է որպես մանկավարժի գործունեության գնահատման չափանիշ: Եթե մանկավարժական արժեքավոր գաղափարը կամ տեխնոլոգիան մնում է նեղ փորձարարական շրջանակի մեջ, տեխնիկապես ոչ լիարժեք ապահովված և մեկ ուսուցչի հայացքները բավարարելով, ապա այդ դեպքում դժվար է խոսել մանկավարժական նորույթի մասին: Սկզբում մանկավարժական նորույթը քննարկվում և հավանության է արժանանում առանձին ուսուցիչների կողմից, հետո միայն երաշխավորվում է մասսայական կիրարկման համար:

Մանկավարժական նորարարությունը գնահատելու և դրանց ստեղծագործաբար մոտենալու համար հիմք են հանդիսանում վերը նշված չափանիշների իմացությունն ու դրանք կիրառելու կարողությունը:

Մասնագիտական գրականության և դպրոցների փորձի վերլուծությունը վկայում են ուսումնական հաստատություններում մանկավարժական նորարարության ոչ բավարար չափով ներդրման մասին:

Մանկավարժական նորարարությունը դպրոցներում չներդնելու պատճառները երկուսն են.

ա) Նորույթներից շատերը որպես կանոն մասնագիտական փորձարկման և քննարկման չեն ենթարկվում դպրոցներում:

բ) Մանկավարժական նորարարության ներդրման համար կոլեկտիվները չեն նախապատրաստվում կազմակերպչական, տեխնիկական և անհատական-հոգեբանական առումներով:

Մանկավարժական նորարարության չափանիշների, բովանդակության և մեթոդական գործադրման իմացությունը առանձին ուսուցիչներին և դպրոցի տնօրեններին հնարավորություն է տալիս օբյեկտիվորեն գնահատել և կանխատեսել նորույթի ներդրման արդյունքները: Նորույթը ներդնելիս դպրոցները չպետք է շտապեն, այլ պետք է ուսումնասիրեն այն և արժեքավորեն նրա արդյունավետությունը ուսումնադաստիարակչական գործընթացի զարգացման համար:

Մանկավարժական նորարարությունը չի ներդրվում այնպիսի դպրոցներում, որտեղ ուսուցիչները չունեն լիարժեք մեթոդական պատրաստվածություն և նորույթների մասին ինֆորմացիա:

Մանկավարժական նորարարությունը բարձրացնում է ոչ միայն ուսումնադաստիարակչական գործընթացի արդյունավետությունը, այլև ուսուցչին զինում է մանկավարժական վարպետությամբ և նրան կրկին անգամ ստեղծագործելու հնարավորություն է տալիս:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ангельски К. Учителя и инновации: Книга для учителя: Пер. с македон. - М., 1991.

Карташов П.И. Внедрение рекомендаций педагогической науки в практику: Организационно управленческий аспект.-М., 1984.

Педагогика (Учебное пособие для студентов педагогических учебных заведений), Издание третье, Москва "Школа-Пресс", 2000.

Подымова Л.С. Подготовка учителя к инновационной деятельности.-М., 1995.

Юсуфбекова Н.Р. Общие основы педагогических инноваций: Опыт разработки теории инновационного процесса в образовании.-М., 1991.